ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/111

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՄՈԱ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Մ. Տերյանի (լիազորագիր տրված՝ 03.06.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.05.2020թ. թիվ 26/26-1/7513-2020 գրությամբ «ՄՈԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.05.2020թ. թիվ 04.1/31.2/11367-20 գրության հիման վրա 21.05.2020թ. թիվ 26/26-1/7513-2020 գրությամբ նախաձեռնել է «ՄՈԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՄՈԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄՈԱ» ՍՊԸ-ն 25.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄՈԱ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով: Մինչ մասնակցության հայտ ներկայացնելը, ելնելով արտակարգ դրությամբ թելադրված իրավիճակից, որի հետևանքով բաց էր թողնված գրավոր պարզաբանման հարցման ներկայացման ժամկետը, մրցույթի հայտերի բացման նախորդ օրը՝ ապրիլի 29-ին զանգահարել ենք «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով մրցույթի պատասխանատու քարտուղար Աննա Սիմոնյանին (098231084 հեռախոսահամարին) պարզելու թե ինչպես է կատարվում նյութերի ընտրությունը, դրանց հաստատումը և ԲՈԿ-ի կողմից գրանցումը (քանի որ մենք հասկացել էինք, որ մրցույթը հաղթելուց հետո կատարողի կողմից պատրաստված նյութերը պետք է ներկայացնենք ՀՀԿԳՄՍՆ, որն էլ իր հերթին նյութերին հավանություն տալուց հետո կներկայացնի ԲՈԿ՝ գրանցման: Պատվիրատուի աշխատակցի հետ քննարկելով մեր կողմից բարձրացված հարցերը, հարցերի պարցաբանումը առավել հստակ մեզ ներկայացնելու համար, նա մեզ փոխանցեց (SMS-ի միջոցով՝ կցվում է) մեկ այլ աշխատակցի հեռախոսահամար՝ 098 23-10-84, առաջարկելով նրանից ճշտել այդ հարցերը: Մենք զանգահարեցինք այդ աշխատակցին (կատարված հեռախոսազանգի քաղվածքը, տրված VIVACELL ընկերության կողմից՝ կցվում է (կարմիր գծանշված է), քննարկեցինք առաջացած հարցերը, որի հետևանքը եղավ այն, որ մենք հասկացանք, որ նյութերը Պատվիրատուի մասնագետների կողմից քննարկելուց և հաստատվելուց հետո, վերջինիս պատասխանատուները ներկայացնում են արդեն պատրաստի նյութերով պարբերականը՝ ԲՈԿ-ի կողմից գրանցման (հասկանալի է, որ այլ դեպքում Ընկերությունը մրցույթին չէր մասնակցի):

30.04.2020թ.-ին՝ մրցույթի արդյունքների բացման նիստում արձանագրվեց, որ 6 չափաբաժնից բաղկացած մրցույթի գնանշմանը հայտ են ներկայացրել թվով ընդամենը 2 մասնակից՝ «ՄՈԱ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով (5 770 000 դրամ) և «Բնագետ» ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով (9 450 000 դրամ): Մրցույթի արդյունքները բացելուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը զանգահարեց մեզ հետևյալ հարցադրումներով, մեջբերում եմ՝ «Ձեր պարբերականը ոնց է կոչվում և երբվանից եք գրանցված ԲՈԿ-ում,

կամ որ պարբերականն է գրանցված ԲՈԿ-ում, կամ, եթե գրանցված չեք և չեք տպագրել, ապա մի մասնակցեք»: Տեղեկացնեմ, որ հետո պարզեցինք, որ ԲՈԿ-ի վեբ կայքում գրանցված կազմակերպությունների ցանկը կար և ցանկացած մարդ կաող է այն տեսնել:

07.05.2020թ.ին մրցույթի քարտուղար Աննա Սիմոնյանի էլ. փոստից ստացվեց պարզաբանման գրություն, մեջբերում եմ՝ «Հաշվի առնելով, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցով հստակ պահանջ է ներկայացվել, որ ամսագրերը պետք է ներառված լինեն Բարձրագույն որակավորման կոմիտեի /ԲՈԿ/ կողմից երաշխավորված պարբերականների ցանկում, ինչպես նաև Ձեր կողմից ներկայացված ապրանքների նկարագրերից պարզ չէ ապահովվա՞ծ է արդյոք այդ պահանջը, ուստի տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ է հավաստիացնել, որ Ձեր կողմից առաջարկվող պարբերականներն ընդգրկված են ԲՈԿ-ի ցանկում:

09.05.2020թ.-ին Աննա Սիմոնյանի կողմից ստացվեց հետևյալ SMS հաղորդագրությունը, մեջբերում եմ՝ «Հիշեցում: Պարբերականների մրցույթով Ձեր հավաստում ներկայացնելու ժամկետը ավարտվում է այսօր» (SMS հաղորդագրության նկարը կցվում է):

09.05.2020թ.-ին, մրցույթի քարտուղարի կողմից նշված ժամկետում, Ընկերությունը «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովին է ուղարկել իր կողմից կատարված պարզաբանումը:

12.05.2020թ. Ընկերությունը ստացել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պարբերական հրապարակումների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի 30.04.2020թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի և այլ նիստերի (կցվում է) (մինչ այդ Ընկերությունը որևէ արձանագրություն չի ստացել) արձանագրությունները, որի 14.1.2 կետով ասվում է, մեջբերում եմ՝ «ՄՈԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում տրամադրված տեղեկատվությամբ ապահովված չէ հրավերով սահմանված պահանջը», իսկ 15.2 կետով նշվում է, որ մեջբերում եմ՝ «Հիմք ընդունելով սույն արձանագրության 14.1.2 կետը՝ «ՄՈԱ» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով»:

ՀՀ ԿԳՄՍՆ գնումների և հաշվապահական հաշվառման վարչության գնումների կազմակերպման բաժնի կողմից պատրաստված գրության նախագծից, որը ստորագրել է

ՀՀ ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղարի տեղակալ պարոն Վահրամ Գասպարյանը անհասկանալի է, թե ինչն են հիմք ընդունել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, պարզաբանման ժամկետի ուշացումը, որը սույն դիրքորոշմանը կից ներկայացված՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարված SMS-ով նշված վերջնաժամկետի ամսաթվով և մեր կողմից ուղարկված պարզաբանման ամսաթվերի համեմատությամբ հավաստվում է որ որևէ ժամկետի ուշացման մասին խոսք լինել չի կարող, թե ԲՈԿ-ի ցանկում ներառված չլինելու հիմքով:

Գտնում ենք, որ ՀՀ ԿԳՄՍՆ գրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա)մասի հիմքով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը իրավաչափ չէ, քանի որ վերոնշյալ դրույթը, մեջբերում եմ ՝ «ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,» չի վերաբերում գրությամբ ներկայացված որևէ հիմնավորմանը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/111 ընթացակարգի շրջանակներում 03.06.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.05.2020թ. թիվ 04.1/31.2/11367-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նախարարության կողմից 2020 թվականի ապրիլի 29-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով կազմակերպված պարբերական հրապարակումների գնման գործընթացի 3-րդ չափաբաժնին հայտ է ներկայացրել «ՄՈԱ» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի ներկայացված ապրանքի նկարագրից հստակ չէ ապահովված է արդյոք «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով

ընթացակարգի հրավերով սահմանված պարտադիր պահանջը, այն է՝ գնման առարկան պետք է ներառված լինի Բարձրագույն որակավորման կոմիտեի /ԲՈԿ/ երաշխավորված պարբերականների ցանկում, ուստի մասնակցին առաջարկվել է ներկայացնել հավաստում առաջարկող պարբերականների՝ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված լինելու մասին: Սակայն, «ՄՈԱ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում այն չի ներկայացվել, ավելին՝ սահմանված ժամկետի ավարտից հետո վերջինիս հավաստել է, որ տեղի է ունեցել թյուրըմբռնում և Հավելված 1.1 ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված պարբերականը ընդգրկված չէ ԲՈԿ-ի ցանկում, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովը մերժել է «ՄՈԱ» ՍՊԸ-ի հայտը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն ներկայացրել է «ՄՈԱ» ՍՊԸ-ի մասին տվյալները, հայտը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկված հավաստումը, գնման գործընթացի հրավերը, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը և խնդրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/111 ընթացակարգի շրջանակներում 03.06.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/111 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/111 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար պարբերական հրապարակումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄՈԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 11.05.2020թ. Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.05.2020թ. թիվ 26/26-1/7513-2020 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 18.05.2020թ. թիվ 04.1/31.2/11367-20 գրությունը և կից փաստաթղթերը, «ՄՈԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում

արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է՝ ներառյալ, եթե մասնակիցը նույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 59-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

(…),

2) բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Ընթացակարգի հրավերի մաս 1-ի 2-րդ կետի 2.2 ենթակետով սահմանվում է, որ մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: **Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող**

պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար պարբերական հրապարակումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄՈԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 11-րդ կետի 1.1 ենթակետի համաձայն՝ հաշվի առնելով, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով հստակ պահանջ է ներկայացվել, որ ամսագրերը պետք է ներառված լինեն Բարձրագույն որակավորման կոմիտեի /ԲՈԿ/ կողմից երաշխավորված պարբերականների ցանկում, ինչպես նաև այն, որ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների նկարագրերից հստակ չէ ապահովված է արդյոք այդ պահանջը, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով որոշում է կայացվել պահանջել մասնակիցներից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հավաստումներ առաջարկվող պարբերականների՝ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված լինելու մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության 13-րդ կետի 13.1.2 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը սահմանված ժամկետում հավաստիացում չի ներկայացրել, սակայն սահմանված ժամկետից հետո՝ 09.05.2020թ. ներկայացրել է պարզաբանում, ըստ որի պարզ է դառնում, որ վերջինիս կողմից տեղի է ունեցել թյուրըմբռնում և ապրանքի ամբողջական նկարագրով (Հավելված 1.1) ներկայացված պարբերականը ընդգրկված չէ ԲՈԿ-ի ցանկում:

Նույն արձանագրության 14-րդ կետի 14.1.2 ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում տրամադրված տեղեկատվությամբ ապահովված չէ հրավերով սահմանված պահանջը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 15-րդ կետի 15.2 ենթակետի համաձայն՝ հիմք ընդունելով արձանագրության 14.1.2. կետը՝ 11.05.2020թ. Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով 3-րդ չափաբաժնով ներկայացված գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ապրանք			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	22211400/4	Պարբերական հրապարակումներ-3	Պարբերականի նպատակներն ու խնդիրները պետք է թելադրված լինեն Հայաստանում ռուս բանասերների և սլավոնական գիտնականների աշխատանքի փորձի պահպանման անհրաժեշտությամբ: Ամսագիրը պետք է իրականացնի կրթական գործառույթ՝ նպաստելով հանրակրթական հաստատություններում ռուսաց լեզվի խորացված ուսումնասիրման նորարարական մեթոդներ: Պարբերականը պետք է ընդգրկված լինի Բարձրագույն որակավորման -կոմիտեի կողմից երաշխավորված պարբերականների ցանկում: Տպագրվող հոդվածները հավաքագրվում են, խմբագրական խորհրդի կողմից փորձաքննություն են անցնում, սրբագրվում ևտպագրվում են կատարողի կողմից: 2020 թվականի համար նախատեսվում է ձեռք բերել 5 համար՝ յուրաքանչյուրը 1500 տպաքանակով: Յուրաքանչյուր համարը պետք է տպագրվի սույն հայտով 1 համարի համար նախատեսված համապատասխան ծավալը(մամուլը) լրանալուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում: **Յուրաքանչյուր մեկ համարի 1 միավորի համար՝ Տեխնիկական ցուցանիշները** **Չափսը** –70*100 1/16, **Ծավալը** – 4 մամուլ, գունավոր **Հատուկ նշագրում՝** Կազմի վրա, տեսանելի մասում, գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը: **Առաքումը՝** տեղափոխումը և բեռնաթափումը կատարվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակների: **Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված**

Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ով ներկայացվել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի Տեխնիկական բնութագրերը
3	Պարբերականի նպատակներն ու խնդիրները թելադրված կլինեն Հայաստանում ռուս բանասերների և սլավոնական գիտնականների աշխատանքի փորձի պահպանման անհրաժեշտությամբ: Ամսագիրը կիրականացնի կրթական գործառույթ՝ նպաստելով հանրակրթական հաստատություններում ռուսաց լեզվի խորացված ուսումնասիրման նորարարական մեթոդներ: Պարբերականը ընդգրկվում է Բարձրագույն որակավորման-կոմիտեի կողմից երաշխավորված պարբերականների ցանկում: Տպագրվող հոդվածները հավաքագրվում են, խմբագրական խորհրդի կողմից փորձաքննություն են անցնում, սրբագրվում և տպագրվում են կատարողի կողմից: 2020 թվականի համար կիրապարակվի 5 համար՝ յուրաքանչյուրը 1500 տպաքանակով: Յուրաքանչյուր համարը կտպագրվի սույն հայտով 1 համարի համար նախատեսված համապատասխան ծավալը (մամուլը) լրանալուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում: **Յուրաքանչյուր մեկ համարի 1 միավորի համար՝** **Տեխնիկական ցուցանիշները** **Չափսը** –70*100 1/16, **Ծավալը** – 4 մամուլ, գունավոր **Հատուկ նշագրում՝** Կազմի վրա, տեսանելի մասում, գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը: **Առաքումը՝** տեղափոխումը և բեռնաթափումը կատարվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակների: **Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված**

Այսպես՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Պատվիրատուն 06.05.2020թ. ժամը 15:00-ին Ընկերությանը հրավիրելով միաժամանակյա բանակցությունների, արդեն իսկ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատել է բավարար: Մինչդեռ, միաժամանակյա բանակցությունների վարման նիստից հետո պահանջել է ներկայացնել հավաստում ամսագիրը Բարձրագույն որակավորման-կոմիտեի կողմից երաշխավորված պարբերականների ցանկում ընդգրկված լինելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ Պատվիրատուն գնահատման փուլում՝ բացառությամբ հրավերով նախատեսված փաստաթղթերի, մասնակիցներից այլ փաստաթղթեր պահանջելու, ինչպես նաև Ընկերության հայտը վերագնահատելու իրավասությամբ օժտված չէ:

Միաժամանակ, անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված հայտի մերժման հիմնավորմանը, արձանագրում եմ, որ 11.05.2020թ. հրավիրված նիստի շրջանակներում գնահատողը հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում տրամադրված տեղեկատվությամբ ապահովված չէ հրավերով սահմանված պահանջը, մինչդեռ հարկ եմ համարում ընդգծել, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով 3-րդ չափաբաժնով ներկայացված գնման առարկայի համար սահմանված տեխնիկական բնութագրին, հետևաբար, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գնման գործընթացի տվյալ փուլում մերժելով Ընկերության հայտը, հիմք ընդունելով արձանագրության 14-րդ կետի 14.1.2 ենթակետը, գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում

որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոներկայացված գործողությունների համատեքստում «ՄՈԱ» ՍՊԸ-ն «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/64» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.05.2019թ. թիվ 26/26-1/7513-2019 գրությամբ «ՄՈԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**